

**ՄԻ ԷՁ ՏԻՐԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԻԼԻԿԵՅՈՒ  
ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԻՅ**

(Շարունակություն, սկիզբը տես հատոր 2-ում, էջ 7-26)

*Հակոբ Բյուսյան*

**Ի ԽՈՐՀՈՒՐԴ ԳԱՍՏԵԱՆ ՅԱԻԱՆԱԿԱԻ ԵՐՈՒՍԱՂԷՄ<sup>1</sup>**

Զայս<sup>2</sup> գիտելով մարգարէս<sup>3</sup> ասէ. **Ահա թագաւոր քո գայ առ քեզ**, զի դու ոչ կամեցար հնազանդութեամբ եւ հաւատով ընթանալ առ նա<sup>4</sup> ի գթութենէ իւրմէ հարկեալ գայ ինքնին<sup>5</sup> մարմնով առ քեզ, վասն որոյ ասէ. **Ուրախ լեր յոյժ դուստր**, եւ<sup>6</sup> կամ հեզնէ՛ գիտելով, զի ոչ ուրախանալոց, այլ մանաւանդ տրտմելոց էր<sup>7</sup>, որպէս ի ծննդեան նորա խոռովեցաւ Հերովդէս եւ ամենայն Երուսաղէմ ընդ նմա, այսպէս եւ այժմ տրտմեցաւ պոռնիկն ընդ մտանել արքային ընդ<sup>8</sup> նմա, շարժեցաւ եւ ասէ. Ո՞վ իցէ սա: Վասն որոյ եւ նա ելաց ի վերայ նորա, եւ ասէ, եթէ ի հիմանց քակտեսցիս<sup>9</sup>, զի ոչ ծանեար զեկեալ այցելուս<sup>10</sup> քո փրկիչ: Յաղագս //(33ա)այնորիկ ասէ առ նա մարգարէս եպերելով. **Ուրախ լեր յոյժ, դուստր Սիոնի**,

<sup>1</sup> **Աղբյուրներ.**

Ա = ՄՄ, ձեռ.2322, թ. 80բ- 90բ

Բ = ՄՄ, ձեռ.3319, թ. 179բ -188բ

Գ = ՄՄ, ձեռ.734,թ. 28ա-39 բ

Դ = ՄՄ, ձեռ. 631, թ. 136 բ -148ա

**Խորագիր՝ Գ** Վահրամայ վարդապետի ասացեալ ի գալուստ Տեառն. «Ուրախ լեր յոյժ, դուստր Սիոնի, քարոզեա , դուստր Երուսաղէմի, ահա թագաւոր քո գա առ քեզ...» **Դ** Ի խորհուրդ գալստեան յԵրուսաղէմ յաւանակաւ. «Ուրախ լեր յոյժ դուստր Սիոնի, քարոզեա դուստր Երուսաղէմի, ահա թագաւոր քո գա առ քեզ...»:

<sup>2</sup> Սկիզբը տե՛ս նախորդ համարում. 2, 2021, էջ 13-24:

<sup>3</sup> ԱԲ մարգարէ

<sup>4</sup> ԱԲ նա ասէ

<sup>5</sup> ԲԳ ինքնին գայ

<sup>6</sup> ԲԳ > եւ

<sup>7</sup> Գ > էր

<sup>8</sup> ԱԲ ի

<sup>9</sup> Ա քակտեսցի

<sup>10</sup> Բ այցելութիւն

**քարոզեա, դուստր Երուսաղէմի**, զի վասն առ Տէր քո ամբարշտելոյն ի հեթանոսս գերեսցիս եւ սրով հռովմայեցոցն հովուեսցիս, զի սատակեսցէ եկեալ Թագաւորն զկառս քո<sup>1</sup> եւ զերիվարս եւ զաղեղն պատերազմողի<sup>2</sup>, եւ<sup>3</sup> որպէս Երեմիաս կատակելով զեղովմայեցիսն ասէր. «Ուրախ լեր դուստր Եղովմայ, եկեսցէ բաժակս այս ի վերայ քոյ, արբցես եւ արբեսցիս<sup>4</sup>» (Ողբ Դ 21): Արդ, զի<sup>5</sup> ոչ հրէիցն միայն, այլ եւ հեթանոսաց փրկիչ յայտնեցաւ Քրիստոս: Տեսցուք եւ առ նոսա զկանխաձայնութիւնս. Ուրախ լեր եկեղեցի հեթանոսաց, դուստր հնոյն Սիոնի, վասն արիւնաց հրահանգութեան, եւ նոյն դարձեալ դուստր վերինն Երուսաղէմի, ազատին մարն մեր ամենեցուն, զի արդարեւ եկեղեցի սուրբ ծնունդ է իմանալին Երուսաղէմի, քանզի սորա ամենայն կարգաց եւ կրանից հիմունք եւ արմատք ի վերուստ են եւ երկնաւորք, որում աւետէ մարգարէն<sup>6</sup>, թէ՛ **Ուրախ լեր յոյժ, դուստր**, զի որ յառաջ ի կոռցն ի ճենճերսն դեգերէիր եւ յանգիտութեան խաւար եւ ի ստուերս մահու նստէիր (հմմտ. Ես. Թ 2), ահա ար//((33բ)դարութեան արեգակն<sup>7</sup> ծագեալ ի վերուստ փարատէ ի քէն զխաւար մեղաց եւ կռապաշտութեան՝ զաստուածգիտութեան շնորհելով քեզ զլոյս: Զարթիր նորդ Երուսաղէմ եւ զգեցիր զզարութիւն<sup>8</sup> բազկի քո զՔրիստոս, որ եկն զաւրացուցանել զքեզ, լոյժ զկապ պարանոցի քո, գերի դուստր Սիոնի, յոտն կաց եւ թաթափեա զփոշիդ մեղաց ի քէն, արի եւ հայեաց նոր տաճար լուսաւոր ընդ արեւելս, եւ տե՛ս զեկեալ փրկութիւն քեզ յԱստուծոյ Հաւրէ, եւ «խոնարհեցո զունկն քո» պատգամաց սորա<sup>9</sup>, «մոռա զժողովուրդ քոյ եւ զտուն հաւր քո, զի ցանկացաւ թագաւոր զեղոյ քո» (Սղմ. ԽԴ 11-12), եւ հանդերձեալ է մտանել ի քոյդ առագաստ՝ զարդարել զքեզ ի հանդերձս ոսկէհուռս եւ պաճուճեալս, վասն որոյ **ուրախ լեր, դուստր Սիոնի**: Յիշէ **զՍիոնն** անուն ոչ վայրապար, այլ զի քեզ

<sup>1</sup> Ա այսպէս ] քո

<sup>2</sup> ԱԲ պատերազմի

<sup>3</sup> ԳԴ > եւ

<sup>4</sup> Գ արբցիս

<sup>5</sup> Գ > զի

<sup>6</sup> Բ մարգարէս

<sup>7</sup> Բ արեգակն արդարութեան

<sup>8</sup> ԱԲ զարութիւն

<sup>9</sup> ԲԳ նորա

տացել զհին արինակս<sup>1</sup> իմանալ զայն , որ իբրեւ եմուտ Դաւիթ յԵրուսաղէմ. էառ նախ զՍիոն լեառն , եւ շինեաց ինքեան ամրոց, որպէս կանխաւ ասացաք յառաջագոյն: Վասն այսորիկ որդին Դաւթի ըստ մարմնոյ Տէր մեր Յիսուս Քրիստոս ի մտանելն իրում յԵրուսաղէմ ի Սիոն դնէ<sup>2</sup> զամրութիւն // (34ա) աւետարանական<sup>3</sup> քարոզութեան, զի անդ ըստ մարմնոյ յայտնեցաւ որպէս գրեալ է: Սիոն ասի մայր, եւ ի նմա ծնաւ մարդն Յիսուս Քրիստոս, եւ անդ զամրութիւն հոգւոց մարդկան զիւր չարչարանս կատարեաց, ի Սիոն եդ արէնս հոգեկեցոյց, եւ անդ զաշակերտսն հոգիացոյց ի վերնատունն, որով զեկեղեցի ամրացոյց: Բայց գիտել արժան է, զի հրէայքն վասն Զաւրաբաբէլի առնուն զասացեալս, այլ նա նախ եղեալ էր եւ եկեալ յԵրուսաղէմ, այլ ճշմարտապէս վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի խաւսի մարգարէս եւ ասէ:<sup>4</sup> **Ուրախ լեր յոյժ, դուստր Սիոնի, քարոզեա դուստր Երուսաղէմի, ահա թագաւոր քո զայ առ քեզ՝ արդար եւ փրկիչ եւ նոյն հեզ եւ հեծեալ ի վերայ իշոյ եւ յաւանակի նորոյ:** Նախ տեսցուք, թէ զի՞նչ է **արդարն եւ փրկիչն եւ հեզն** ըստ ինքեան եւ ապա թէ՛ զի՞արդ յարմարին անուանքս այսոքիկ ի վերայ Տեառն: **Արդար**, ըստ արտաքնոցն այն ասի, որ ոչ անիրաւէ եւ ոչ զրկէ զուրուք եւ ոչ զրկի եւ անիրաւի յումեքէ: Եւ դարձեալ, եթէ ոք զինչս բաժանէ հաւասարութեամբ ըստ պիտոյիցն չափոյ ընդունողացն արդար ասի, եւ դատաւոր, որ ճշմարտութեամբ առնէ զդատաստանն, եւ որ տանն տէրն է եւ քաղաքի իշխան եւ ազանց թագաւոր, եւ ոչ անիրաւութեամբ շարժին, այլ՝ ուղղութեամբ դատին՝ զհնազանդեալսն , արդար ասին: Այլ այսոքիկ ոչ առնուն զտեղի, զի ոչ է ամենեցուն կարողութիւն՝ լինել դատաւոր կամ իշխան կամ թագաւոր, իսկ արդար՝ ամենեքեան, որք կամեսցին, կարողութիւն է: Իսկ ի Գիրս Սուրբ այն կոչի արդար, որ բոլոր մասունս առաքինութեան ինքեան բերէ<sup>5</sup>: Վասն զի եռամասնեայ գոլով հոգի՝ ունելով բանս, ցասումն եւ ցանկութիւն, եւ յորժամ իւրաքանչիւր մասն իւրականն զարդարի առաքինութեամբ՝ բանն՝ խոհականան, ցասումն՝ արիակա-

<sup>1</sup> ԱԲ արինակն Դ արէնս

<sup>2</sup> ԱԲ եդ

<sup>3</sup> Ա աւետական

<sup>4</sup> ԳԴ Զաւրաբաբէլ եկեալ եւ թագաւորեալ էր յայնժամ: Եւ զսմանէ ասէ ] Զաւրաբաբէլի առնուն զասացեալս...եւ ասէ

<sup>5</sup> Բ բերէ յինքեան

նան, ցանկություն՝ ողջախոհականան՝ արդար կոչի: Որպես եւ արքն աստուածահաճոյք՝ վկայեալք յԱստուածաշունչ գրոց Նոյ եւ Յոբ, Չաքարիայ եւ Եղիսաբեթ: Ըստ այնմ՝ “Նոյ արդար, կատարեալ անդ յազգի իւրում հաճոյ եղեւ» (Ծննդ. 2 9): Եւ թէ՛ «Յոբ էր այր ճշմարիտ, անարատ, արդար» (Յոբ Ա 1): Եւ վկայէ անտարանագիրն, թէ՛ “Չաքարիայ եւ Եղիսաբեթ արդարք էին երկոքեանն, եւ գնային յամենայն պատուիրանս Տեառն անարատք» (Ղուկ. Ա 6): Եւ առաջին “գործ արդարութեան է բաշխողական գոլ այնմ ինչ որում արժանն է, երկրորդ՝ ողջ պահել զհայրենի սովորութիւն եւ զարէնսն զգրեալսն, երրորդ՝ ճշմարիտ գոլ եւ ոչ հաւանել առ իրս ստաբար բերեալս, չորրորդ՝ պահել զխոստմունս: Այլ ունի առաջին իրաւունս, արդարակս հատուցանել առ Աստուած եւ զհայրենիսն եւ ծնաւոյն եւ անցնիւրսն<sup>2</sup>, որովք լինի բարեպաշտութիւն: Եւ հետեւի արդարութեան աստուածայնութիւն եւ ճշմարտութիւն եւ հաւատք եւ չարի ատեցութիւնք»<sup>3</sup>, որով պայծառացեալք պատկերանայ Աստուծոյ: Այս թէ զինչ է արդարութիւն ըստ ինքեան: Իսկ **փրկիչ** անուանի, որոց ի ծառայութեան եւ ի չարչարանս իցեն , ազատութիւն եւ հանգիստ արասցէ, որպէս Մովսէս իսրայելացոցն յեգիպտոսէ ի խիստ չարչարանացն եւ ի դառն ծառայութենէն փարաւոնի, Գէդէոն եւ Բարակ՝ ի մադիանացոցն եւ յամաղեկացոցն եւ յայլ շրջակայ ազգացն, Սամսոն եւ Դաւիթ՝ յայլազգեացն: Տեսցուք այսուհետեւ թէ <sup>4</sup> զի՞նչ է **հեզութիւն** եւ վասն է՞ր յուղութեան կարգի դնեն աստուածային<sup>5</sup> Գիրք, եւ թէ ուստի՞ ծնանի: Հեզութիւն է, որ զնախատինս եւ զհարուածս քաղցրութեամբ ընդունի, եւ թէպէտ կարող եւ ձեռնհաս իցէ նախատել եւ հարկանել, փոխարեն ոչ հատուցանէ, այլ երկայնմտութեամբ համբերէ նախատանացն եւ տանջանացն, որպէս Դաւիթ՝ Սեմէի եւ Տէրն՝ իւրոց նախատողացն եւ հարկանողացն: Եւ հեզութեան անուն մի է, բայց ի վարս բազմաց բերի, զի հանդարտն եւ ծանրաշարժն եւ լռինն հեզութեան անուամբ կոչին: Բայց գիտեմ գովելի զընդդէմն նոցա քան զլաւութիւն զբարի խաւսելն, ըստ Սողոմոնի, թէ՛

<sup>1</sup> տե՛ս **Դաւիթ Անյաղթ**, Սահմանք , պր.ժ. տե՛ս ՄՀ, հտ.Գ, էջ 174 [55-56]:

<sup>2</sup> Բ անձնիւրսն

<sup>3</sup> տե՛ս **Արիստոտելի** յաղագս առաքինութեան, էջ 631-632 :

<sup>4</sup> Ա եւ թէ

<sup>5</sup> Ա զաստուածային

“Տուր իմաստնոյն պատճառս<sup>1</sup>, զի իմաստնագոյն լիցի» (Առակ. Թ 9), եւ դարձեալ, թէ՛ “Տուր անզգամին պատասխանի, զի մի՛ իմաստուն երեւեսցի» (Առակ. ԻՁ 5), եւ ըստ առաքելոյ. “Իսաւել զշինուած բարի հաւատոյն, զի տացէ շնորհս խողացն» (Եփես. Դ 29), եւ այլուր, թէ՛ “Իսաւեսցի իւրաքանչիւր ոք զճշմարտութիւն ընդ ընկերի իւրում» (Եփես. Դ 25) եւ “Չառաքինին յընթացս քան զճանրաշարժն գովելի»: Որպէս յերգսն գովի փեսայն ի հարսնէն<sup>2</sup>. «Եղբորորդին իմ, ասէ, նման է այծեման, կամ որթուց եղանց՝ վազելով ի վերայ լեռանցն Բերթելա» (Երգ. Բ 9): Եւ զԱսայել աստուածային Գիրն ներբողէ, թէ՛ Էր երագ յընթացս որպէս «այծեամն ի դաշտի» (Բ Թագ. Բ 18): Իսկ ի պատերազմի արին քան զհանդարտն գովելի, որպէս յԵսաւ գովի ընդդէմ Ամաղեկայ եւ քանանացոցն, Սամփոն<sup>3</sup> եւ Դաւիթ ընդդէմ այլազգեացն: Արդ, եթէ այս<sup>4</sup> այսպէս է որպէս ասացաւ<sup>5</sup>, զի՛արդ ի գովութեան տեղի առեալ լինի յԱստուածաշունչ Գրոց հեզութիւն, ըստ որում ներբողի Մովսէս ի Հոգւոյն Աստուծոյ, որպէս գրեալ է, թէ՛ «Այրն այն Մովսէս հեզ է քան զամենայն մարդիկ» (Թիւք ԺԲ 3), եւ Դաւիթ քան զամենայն առաքինութիւնսն, զոր առնէր զայս նախապատուեաց ասելով. «Յիշեա Տէր զԴաւիթ եւ զամենայն հեզութիւն նորա» (Սղմ. ՃԼԱ 1): Եւ Տէրն երանէր զհեզսն ասելով. «Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր» (Մտթ. Ե 5): Եւ Պաւղոս խրատէ զմեզ հեզութեամբ ընդունել<sup>6</sup> զբանն: Ինձ թուի, թէ զայլ իմն հեզութիւն գովեն Գիրք աստուածայինք, վասն զի դիւրամէտ է առ վատթարագոյն բնութեանս, ըստ նմանութեան ծանրագոյն վիմի՝ ի զառ ի վերսն ամենեւին անշարժ, իսկ ի բարձրաւանդակէ ի խոնարհ առաւել քան զբանէ հասմանն արագութիւն: Նոյնպէս մարդկայինս կեանք ծանր եւ վայրաբերող է. նորին աղագաւ գովի յԱստուծոյ եւ յաստուածայնոցն՝ ոչ ամենեւին անբարկանալին, զի զայն անկար է ուղղել այնոցիկ, որ ըստ բնութեան ունին զտրտմականն, այլ որ առաքինութեամբ սանձահարեն զախտսն հակառակաքն զհակառակսն բժշկել, ըստ այսոցիկ եւ հեզութեամբն՝ զտարապարտ բարկու-

<sup>1</sup> Ա պատճառ

<sup>2</sup> Ա ի հարսնէն փեսայն

<sup>3</sup> Բ Սամսոն

<sup>4</sup> Բ > այս

<sup>5</sup> Ա > որպէս ասացաւ

<sup>6</sup> Բ ընդունիցիք

թին, որով ոչ միայն յաստուածայնոցն գովի հեզն, այլ եւ՝ ի հասարակաց մարդկանէ, քանզի յորժամ արտաքոյ բնութեան շարժի բարկացողն, ամենայն դիրք մարմնոյն յախտէն այլայլի, եւ ի գազանաց նմանութիւն փոփոխեալ կերպարանի: Տեսցուք այսուհետեւ, թէ ուստի ծնանի հեզութիւն կամ ընդդիմակն նորին բարկութիւն, զի որք կամեսցին ստանալ զբարեբանութիւն հեզոցն՝ դիրաւ ուղղեսցեն զառաքինութիւն նորա: Արդ, ծնող հեզութեան խոնարհութիւն է, եւ արմատ բարկութեան ամբարտաւանութիւն, քանզի բարկութեան պատճառք թշնամանքն եւ անարգանքն լինին, եւ ուր խոնարհութիւն է յանարգանացն եւ ի թշնամանացն սրամտութիւն ոչ է, եւ ուր սրամտութիւն ոչ է՝ հեզութիւն եւ ուղղութիւն է, յորմէ գովութիւն եւ երանութիւն: Բայց մի՛ որք զբարկութիւն յամենայնի չար վարկանի եւ հեզութիւն՝ բարի, զի ի ժամանակի բարի են երկոքեանն: Մովսէս հեզ վկայի, բայց այնքան բարկացաւ երբեմն ի վերայ ժողովրդեանն նախանձախնդիր Աստուծոյ եղեալ, մինչ զի զտախտակսն զաստուածագիծ խորտակեաց: Եւ պատմի դարձեալ, թէ ծանրացասումն եղել ի վերայ յանցաւորացն Դադանայ եւ Աբիրոնի (տե՛ս Թիւք ԺԶ) եւ Փենէիէս քահանայ զհարայելացին հանդերձ մադիանացովն սատակեաց (տե՛ս Թիւք ԺԵ), եւ Դաւիթ հեզ ի սատակումն տանն Նաբաղու զինեցաւ, (տե՛ս Ա Թագ. ԻԵ) եւ վէմն հաւատոյ Պետրոս զԱնանիայ եւ զՍափիրայ մահացոյց (տե՛ս Գործք Ե 1-10): Թողում ասել զայլսն ինքն՝ Տէրն, որ հեզն էր ամենայնի եւ՝ խոնարհ, որ ասէր. «Ուսարուք յինէն, զի հեզ եմ եւ խնարհ սրտիւք» (Մտթ. ԺԱ 29), յորժամ պարտն պահանջէր սաստիւ խաւսէր առ դպիրսն եւ փարիսեցիսն, որպէս ասէր. «Վա՛յ ձեզ դպրաց եւ փարիսեցոց կեղծաւորաց» (Մտթ. ԻԳ 13), եւ թէ փարիսեցի կոյր. «Սրբեա նախ զներքին բաժակին եւ սկաւառակին» (Մտթ. ԻԳ 26), եւ երբեմն արար խարազան չուանեայ եւ եհան արտաքս ի տաճարէն զամենեսեան, որով երեւի, թէ ի ժամու բարի են երկոքեանն, որպէս ասացաք: Այսոքիկ, թէ զի՞նչ է արդարն եւ փրկիչն եւ հեզն ըստ ինքեան: Տեսցուք այսուհետեւ, ըստ մերում խոստմանն, թէ զիարդ յարմարին անուանքս այսոքիկ ի վերայ Տեան: Արդ, անուանի Տէրն **արդար**, զի զնախախնամութիւն զոյգ շնորհեաց ամենեցուն, եւ ի մարդեղութեան ըստ հաւատոց հաւասար բաշխեաց զշնորհս միանգամայն եւ արդարացի դատմամբ զթշնամին մեր ընկեց յա-

---

<sup>1</sup> Բ > եւ

թոռոյ եւ զմեզ ընդ ինքեան բարձրացոյց յուսով: Դարձեալ **արդար** կոչի, զի աղբիւր գոլով ամենայն առաքինութեան , որպէս ասէ Պաւղոս. «Եղեւ մեզ յԱստուծոյ Հաւրէ արդարութիւն»<sup>2</sup> (Ա Կորնթ. Ա 30): Չայս անուն եւ ի մարգարէիցն լուիցես նմա, ըստ այնմ<sup>3</sup>. «Արդար է Տէր զարդարութիւն սիրէ»<sup>4</sup> (Սղմ. Ժ 8), թէ՛ «Արդար է Տէր յամենայն բանս իւր» (հմմտ. Սղմ. ՃԽԴ 17), եւ Երեմիաս. «Արդար ես դու, Տէր, եւ մատուցից առաջի քոյ աղերս» (Երեմ. ԺԲ 1): Եւ դարձեալ **արդար** կոչի նա, զի զմարդն, որ մարմին աղցաւոր ունի, ոչ իբրեւ զհրեշտակս դատի, որ ոչ ունին մարմին, զի մարմին տկար է եւ ընդ կարեալք անկեալ բազում անգամ ընդ կարեւորացն մտանէ աւելորդն, զի պէտք մարմնոյն յոլովակի են, այս է՝ ուտելն, ըմպելն, ագանելն, ննջելն եւ այլ բազումք, որ բաշխեն զխորհուրդ հոգւոյն յայսպիսի կիրս, որ են մեղք: Իսկ հրեշտակք յայսպիսեացս ոչ ունին արդարապէս . յետ մեղանչելոյն, թէ զղջան ոչ հանդիպին թողութեան որպէս մարդիկ: Իսկ **Փրկիչ** անուանի Տէրն հնոյն Իսրայէլի ի գերողացն եւ ի կոռոցն, եւ ամենայն աշխարհի ի մեղաց եւ ի սատանայի, զի եղեւ մեզ ի Հաւրէ Աստուծոյ փրկութիւն, ըստ որում<sup>6</sup> ասաց Եսայի. «Առաքեսցէ Տէր այր մի, որ փրկեսցէ զնոսա» (Ես. ԺԹ 20), եւ թէ՛<sup>7</sup> «Ոչ պատգամաւոր ոք եւ ոչ հրեշտակ, այլ ինքն՝ Տէր եկեսցէ եւ փրկեսցէ զնոսա» (Ես. ԿԳ 9), եւ թէ՛ «Եկեսցէ ի Սիոնէ Փրկիչ եւ դարձուցէ զամբարշտութիւնս<sup>8</sup> Յակոբայ»<sup>9</sup> (Ես. ԾԹ 20): Եւ հրեշտակապետն Գաբրիէլ առ Յովսէփ աւետարա-

<sup>1</sup> ԳԴ արդար եւ փրկիչ, նոյն հեզ: Արդ, այսոքիկ անուանք, ըստ տնաւրէնութեան են նմա եւ ոչ ըստ բնութեան , զի այն անհաս է յեղականացս: Անուանի նա արդար, զի զնախախնամութիւն զոյգ շնորհեաց ամենեցուն, եւ ի մարդեղութեան ըստ հաւատոց հաւասար բաշխեաց զշնորհսն միանգամ եւ արդարացի դատմամբ զթշնամին մեր ընկեց եւ զմեզ բարձրացոյց յուսով ընդ ինքեան ] արդար եւ փրկիչ, նոյն հեզ...: Նախ տեսցուք, թէ զի՞նչ է արդարն եւ փրկիչն եւ հեզն ըստ ինքեան եւ ապա թէ զի՞արդ յարմարին անուանքս այսոքիկ ի վերայ Տեանն...ինքեան բարձրացոյց յուսով:

<sup>2</sup> ԳԴ արդարութիւն, որպէս ասէ Պաւղոս ] որպէս ասէ Պաւղոս...արդարութիւն

<sup>3</sup> ԱԲ Դաւթայ

<sup>4</sup> ԱԲ > արդար է...սիրէ

<sup>5</sup> Գ > եւ դարձեալ արդար կոչի, նա, զի մարդն, որ մարմին աղցաւոր ունի...որպէս մարդիկ

<sup>6</sup> ԱԲ որպքէս

<sup>7</sup> Գ > եւ թէ

<sup>8</sup> Բ զամբարշտութիւն

<sup>9</sup> Գ > եւ դարձուցէ... Յակոբայ

ներ. «Ծնցի քեզ որդի, եւ նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իրեանց»<sup>1</sup> (Մտթ. Ա 21): Իսկ **հեզ** կոչի Տէրն<sup>2</sup>, զի ոչ անձամբ, այլ ի Հարի եւ ի Հոգւոյն եկն յառաջ ի նշանս եւ ի վարդապետութիւնս, զի Հայր առաքեաց զնա յաշխարհ, եւ ի վերայ նորա<sup>3</sup> հանգեալ Հոգին հեզութեան ի Յորդանան, ըստ որում ինքն ասաց Եսայեալ. «Տէր Տէր առաքեաց զիս, եւ Հոգի նորա» (Ես. ԽԸ 16), եւ թէ՛ «Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ եւ էաւ՝<sup>4</sup> իսկ զիս՝ աւետարանել աղքատաց առաքեաց<sup>5</sup> զիս, քարոզել գերեաց զթողութիւն եւ կուրաց տեսանել» (Ես. Կ 1), եւ թէ՛ «Իջի ես յերկնից. ոչ զկամս իմ արարից, այլ Հարի» (Յովհ. Զ 38), եւ «Ոչ իմ կամք, այլ քոյդ լիցին» (Ղուկ. ԻԲ 42): Վասն նորին հեզութեան ասաց Եսայի. «Ոչ աղաղակեսցէ եւ ոչ վիճեսցի, եւ ոչ ոք լուիցէ ի հրապարակս զբարբառ նորա» (Ես. ԽԲ 2) //(35ա): Որ եւ ի հրապարակն Պիղատոսի «իբրեւ զոչխար ի սպանդ վարեցաւ եւ իբրեւ զորոջ առաջի կտրչի անմոռնչ եկաց» (Ես. ԾԳ 7): Ուստի Դաւիթ ի դէմս նորա ասաց. «Լուռ եղէ եւ ոչ բացի զբերան իմ» (Սղմ. ԼԸ 10): Դարձեալ **հեզ** կոչի նա, զի արեւնս հեզութեան եւ անտաղտուկ եղ, եւ ասաց. «Ուսարուք յինէն, զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւք» (Մտթ. ԺԱ 29): Սմին իրի մարգարէս աւետարանէ եկեղեցւոյ. Մի՛ երկնչիր ի թագաւոր լսելն զանուն նորա, զի հեզ է, զի ոչ իբր ի Սինա զարհուրմամբ, այլ ի Սիոն խաւսի ընդ քեզ հեզութեամբ: Այտքիկ, թէ վասն է՞ր կոչի նա **արդար եւ փրկիչ եւ հեզ**: Բայց գիտել արժան է, զի այս անունքս, ըստ տնայրինութեան են նմա, եւ ոչ ըստ բնութեան, զի այն անհաս է յեղականացս<sup>7</sup>, այլ եւ ըստ բնութեան անուն եւ ոչ ինչ է. ի քառիցս յայսցանէ եղանակացս ցուցանեմք, զի դրութեամբ եւ ոչ բնութեամբ են անունք. «ի հոմանունութենէ, ի բազմանունութենէ, ի փոխադարձելոց<sup>8</sup> անուանց եւ որ առ իւրաքանչիւր ազգս զանազանք նորին իրաց ստորոգին անուանք ի հոմանունութենէ բարձ ասելով՝ զինչ կցորդութիւն կենդանւոյ մարմնոյ եւ զգայական կենդանեաց առ անշունչս եւ անբանս յարհեստից

<sup>1</sup> Գ > Եւ հրեշտակապետն...իւրեանց

<sup>2</sup> Գ նոյն հեզ ] իսկ հեզ կոչի Տէրն

<sup>3</sup> ԱԲ > նորա

<sup>4</sup> Բ աւծ

<sup>5</sup> ԱԲ > առաքեաց

<sup>6</sup> Դ զիար

<sup>7</sup> Բ եղանակացս

<sup>8</sup> Ա փոխադարձելոց



կառուցեալս, եւ կամ երկնային շանն՝ առ երկրայինս եւ ջրայինս, կամ առ-  
 ռիծու եւ խեցգետնոյ երկնայնոց՝ առ ցամաքայինս եւ ջրայինս: Այսպէս ի-  
 մասցիս զայլսդ ի հոմանուանց: Իսկ ի բազմանունութենէ, որպէս սուսերն  
 եւ նրանն երկսայրին եւ վաղակաւորն, դալապարն եւ խարբն, պողովա-  
 տիկն եւ թուրն մի եւ նոյն ելով՝ զանազանք զոմանէ ստորոգին անու-  
 անց<sup>2</sup>, իսկ ի փոխադրութենէ անուանց որպէս երբեմն Արիստոտելէս, ի-  
 սկ յետոյ Պղատոն կոչեցաւ»<sup>3</sup>, եւ գլուխ առաքելոցն երբեմն Սիմոն, իսկ յե-  
 տոյ Պետրոս կոչեցաւ եւ այլք այսպիսիք: Իսկ որ առ իւրաքանչիւր ազգս  
 զանազան նորին իրաց կոչին անուանք, քանզի «մարդ» նոյն իրք առ ա-  
 մենեսեան ելենացիք «աւթրաւպաւս»<sup>4</sup>, իսկ հայք՝ «մարդ», եւ այլք՝ գիշի,  
 եւ այլք՝ այլ ինչ : Եւ նոյն բնութեան տարերք ելով զի՞նչ մի բնութիւն նշա-  
 նակէ, որպէս Պղատոն կամի զերկիր եւ գէէ<sup>5</sup>, եւ այլքն՝ նեստեա<sup>6</sup> կամ  
 զհուր եւ պիր<sup>7</sup>, եւ պիռամիդէս, ապա յայտ է, թէ ըստ դրութեան եւ ոչ ըստ  
 բնութեան զանուանս պատահեաց գոլ<sup>8</sup>: Յետ այսորիկ եւ զայս պարտ է  
 գիտել <sup>9</sup>, զի ամենայն մարգարէքն, որք ծաղկեցան տանն Իսրայէլի, յա-  
 ռաջագոյն խաւսեցան վասն գալստեանն Քրիստոսի, զոր հրէայքն փոր-  
 ձեցան ի մարմնաւորս ոմանս թագաւորս հանել զթարգմանութիւն, զոր  
 գիտացեալ մարգարէս տայ այնպիսի նշանս, որ բնաւ ոչ այլ ոք տեսեալ  
 եղել ի թագաւորացն, ասէ. **հեզ է, նստեալ յէջ եւ յաւանակ՝** ոչ սնապարծ  
 կառաւք եւ յոգնակի երիվարաւք, ոչ սուսերաւորաւք եւ բրաւորաւք<sup>10</sup> առա-  
 ջի, այլ յիշի նստեալ եւ ի տղայոց ովսաննայիք արհնաբանեալ<sup>11</sup>: Արդ,  
 այս ըստ նկարա//(35բ)գրին զխոնարհութիւն յայտնէ յէջ եւ յաւանակ նս-  
 տելն, իսկ ըստ իմացման առակէ ըստ<sup>12</sup> երկուց ժողովրդոց, որք ի հրէից

<sup>1</sup> Բ երկնայնոյ

<sup>2</sup> Ա անուանք

<sup>3</sup> տե՛ս Անանուն, Յաղագս Մեկնութեան Պերիարմենիաս- ՄՀ, հտ. ԺԷ, էջ 805 [35-37] :

<sup>4</sup> **Տառադարձումն է հուն.** Α[ndrwpos

<sup>5</sup> **Տառադարձումն է հուն.** Gh;

<sup>6</sup> Ա նեստիւ

<sup>7</sup> **Տառադարձումն է հուն.** Pur

<sup>8</sup> ԳԴ > Այսոքիկ , թէ վասն է՞ր կոչի նա արդար եւ փրկիչ եւ հեզ ....պատահեաց գոլ:

<sup>9</sup> ԱԲ գիտել պարտ է

<sup>10</sup> Դ ոչ վարոցավորք եւ տիգաւորք ] ոչ սուսերաւորաւք եւ բրաւորաւք

<sup>11</sup> Դ գովասանեալ ] ովսաննայիք արհնաբանեալ

<sup>12</sup> ԱԲ > ըստ

եւ ի հեթանոսաց. ոմն կիրթ գոլով բեռնակրութեան վասն արինացն տաղտկութեան<sup>1</sup> եւ ոմն անմուղ՝ վասն անհմուտ գոլով աստուածաշտութեան. յորոց վերայ նստի Քրիստոս<sup>2</sup> իբր ի միոյ, զի նա է խաղաղութիւն մեր, որ արար զերկոսեան մի: Յայս խորհուրդ եւ նահապետն Յակոբ ասաց. “Կապեսցէ զէշ իւր զորթոյ<sup>3</sup>», այսինքն՝ զհրէայսն<sup>4</sup> զըստ<sup>5</sup> մարմնոյ իւր՝ զհրէայսն, զորթոյ<sup>6</sup> զինքենէ, որ էր որթ մշակեալ ի Հաւրէ, «եւ զգնդակէ որթոյ զաւանակ իւր» (Ծնդ. ԽԹ 11)՝ զիւրոյ առաքելոցն, զտրմուղ յաւանակ<sup>7</sup> ազգէ <sup>8</sup> հեթանոսաց: Յիշէ եւ զայս Եսայիաս. “Տեսի, ասէ, հեծեալ մի իշոյ եւ հեծեալ մի ուղտու» (Ես. ԻԱ 7), որ թէպէտ եւ<sup>9</sup> զՅովհաննու է իմանալ, որոյ հանդերձն էր ի ստեւոյ յուղտու<sup>10</sup>, եւ կարապետ էր զայն, որ յիշով յերուսաղէմ մտանելոց էր: Սակայն ոչ է անճահ թերեւս զանպատարագելի անասունն<sup>11</sup> զէշն յարինակ հրէիցն առնուլ, որ պիղծ գտան առ արէնսն եւ զանմաքոր ուղտն , ըստ յաւանակին<sup>12</sup>, եւ զայն առնուլ նշանակ անմաքրիցն<sup>13</sup> հեթանոսաց: Եւ այս յայտ անտի<sup>14</sup> է, զի յառաջ եր//((36ա)թեալ եւ զայս անունս փոխէ, եւ զերկուսն ձի կոչէ (տե՛ս Ես. ԻԱ 9), զի տացէ իմանալ, թէ առակ արինակի էր տեսիլն, եւ ոչ<sup>15</sup> իսկապէս կենդանիք: Եւ երկու երիվարին<sup>16</sup> մի ասէ զվերելողն<sup>17</sup>. “Տեսի, ասէ, զի նոյն հեծեալ երկձի գայր». զի մի թագաւորն յերկուց ազգացն վերայ հան-

<sup>1</sup> Դ տեղեկութեան ] տաղտկութեան

<sup>2</sup> Գ Քրիստոս նստի

<sup>3</sup> Դ > զորթոյ

<sup>4</sup> Դ զհրէայսն

<sup>5</sup> ԱԲ ըստ

<sup>6</sup> ԱԲ > իւր...զորթոյ

<sup>7</sup> Դ յովանակ

<sup>8</sup> ԱԲ ազգ

<sup>9</sup> ԱԲ > եւ

<sup>10</sup> ԱԲ ուղտու

<sup>11</sup> ԱԲ անուանն ] անասունն

<sup>12</sup> Դ յովանակին

<sup>13</sup> ԱԲ անմաքրոցն

<sup>14</sup> Գ անդի

<sup>15</sup> Գ > ոչ

<sup>16</sup> ԱԲ երիվարն

<sup>17</sup> Դ զվերելակն

գեալ<sup>1</sup>: Եւ զի մի՛ ասիցեն, թէ իշով եկեալ թագաւորն զի՞նչ կարիցէ վճարել, սկսանի զկնի խոնարհագունիցն զբարձրագոյնսն ճառել զնմանէ.

Սատակեսցէ զկառս յԵփրեմա<sup>2</sup> եւ զերիվարս յԵրուսաղէմէ, եւ խորտակեսցի աղեղն պատերազմողի, եւ բազմութիւն եւ խաղաղութիւն ազգաց (Թ 10ա). Թէ հինն Իսրաէլ ընկալեալ էր զթագն, սատակելոց էր զկառս եւ զերիվարս թշնամեաց ի նոցանէ հանդերձ աղեղնաւոր պատերազմողաւք: Եւ զխաղաղութիւն եւ բազմամարդութիւն բառնալ կամէր յազգաց հեթանոսաց եւ նոցա տալ ոչ միոյ ցեղից<sup>3</sup> կամ երկուց<sup>4</sup> այլ՝ բոլորիցն: Ուստի եւ յանուանէ զերկուս թագաւորութիւնս յիշէ. զԵփրեմին, որ ի Սամարիա եւ զՅուդային, որ յԵրուսաղէմ՝ միանգամայն նշանակելով, թէ այլ ոչ որիշ կայցեն նոքա, այլ ազատեալք ի պատերազմաց թշնամեացն // (36բ) միաբանաբար վայելեսցեն յանքոյթ խաղաղութիւն եւ բազմասցին ազգաւք եւ ժողովրդովք: Իսկ զի անարգեցին զեկեալ շնորհն եւ զբաշխողն նորին<sup>5</sup>, եբարձ նա զիշխանութիւն թագաւորութեանց նոցա, խորտակեաց զաղեղն ուժոց, եւ զաւրութիւն նոցա սրով հռոմայեցոց: Էբարձ ի նոցանէ զխաղաղութիւն գերութեամբն, եւ ի բազմութենէն, յոր էին ցիրեցանաբար ընդ ամենայն երկիր: Եւ խաւսեցաւ զխաղաղութիւն ի սիրտս հեթանոսաց, որք ընկալան զնա եւ երկիր պագին փառաց նորա, որոց արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ, զի նա է խաղաղութիւն մեր, յորոյ յայտնութեան հրեշտակք փառք ի բարձունս երգէին եւ յերկիր խաղաղութիւն: Նոցին եւ մանկունքն այսաւր ձայնակից լինէին<sup>6</sup> ի գալուստ նոր արքային:

**Եւ տիրեսցէ ջուրց ի ծովէ մինչեւ ի ծով, ի գետոց մինչեւ ի ծագս աշխարհի<sup>7</sup>** (Թ 10բ). Ահաւասիկ այլ նշան եւ մեծ եւս անհամեմատ թագաւորութեան նորա: Հանգոյն մարգարէիս եւ Դաւիթ ասէ զխաղաղութեան պարգեւեալ եւ զտերութեան մեծութիւն. «Ծագեսցէ, ասէ, յաւուրս նորա արդարութիւն բազում եւ խաղաղութիւն» (Սղմ. ՀԱ 7) եւ **տիրեսցէ ի**

<sup>1</sup> ԱԲ հանգչէր

<sup>2</sup> Դ յերփրեմա

<sup>3</sup> ԱԲ ցեղի

<sup>4</sup> ԱԲ երկու

<sup>5</sup> ԱԲ նորա

<sup>6</sup> ԱԲ լինին

<sup>7</sup> Դ երկրի (այսպէս այլուր) ] աշխարհի

**ծո// (37ա) վէ մինչեւ ի ծով, ի գետոց մինչեւ ի ծագս աշխարհի (Թ 10գ).**

Արդ, եկեալ ցուցցեն հրէայքն, թէ ո ոք ի թագաւորացն Իսրաէլի կալաւ այսպիսի թագաւորութիւն եւ իշխանութիւն: Զի թէ զաւրաւորն ի նոցանէ Սողոմոն մինչեւ ի՛ Տիրոս տիրեաց ՝ զի՞նչ ասելի է զայլսն: Այլ ի Տէրմեր Յիսուս Քրիստոս լցաւ ասացեալն. Որում տուաւ ըստ տնաւրէնութեան իշխանութիւն յերկինս եւ յերկրի եւ ընդ ամենայն երկիր ել բարբառ նորա, եւ մինչեւ<sup>2</sup> ի ծագս աշխարհի խաւսեցան վասն նորա, որ եւ ետ «գհեթանոսս ի ժառանգութիւն եւ իշխանութիւն մինչ ի ծագս երկրի» (Սղմ. Բ 8), եւ «թագաւորութեան նորա ոչ գոյ բաւ» (Ղուկ. Ա 33):

**Եւ դու արեամբ ուխտի քո արձակեցեր զկապեալս քո յանջրդի գբոյ (Թ 11).** Թեպէտ արձակեաց զԻսրաէլ Զաւրաբաբէլ ի գբոյ գերութեան ի Բաբելոնէ, սակայն ոչ իւրոյ արեանն ուխտի, այլ՝ յարինացն: Իսկ Քրիստոս զորս արձակեաց իւրով արեամբն: Զի՞նչ իցէ արեամբ ուխտին: Ասելի է. ամենայն ուխտ յԱստուծոյ առ մարդիկ արեամբ նորոգեցաւ. որպէս առ Աբրահամ զուխտ թլփատութեան հանդերձեալ էր տալ Աստուած. «Առ, ասէ, դու երինջ երեմեան, եւ քաւջ երեմեան, եւ խոյ // (37բ), եւ տատրակ, եւ աղանի, եւ զենցես» (Ծնդ. ԺԵ 9): Զորս<sup>3</sup> իբրեւ էզեն ի հեղման արեանն ետ ի թլփատութեան ուխտն, զի արինն նշանակ եղիցի ուխտին: Եւ Նոյ իբրեւ եհեղ զարինն զենմանցն, յորում հաստատեցաւ Տէր Աստուած, եդ ընդ նմա ուխտ՝ այլ ոչ հարկանել զերկիր միանգամայն: Նոյնպէս եւ Մովսէս, յորժամ զգրաւական ուխտն ընկալաւ յԱստուծոյ քարեղէն տախտակաւքն ի Սինա<sup>4</sup>, արեամբ որթուցն զնոյն առ ժողովուրդն հաստատեաց, զի իբրեւ ընթերցաւ զամենայն պատգամ ուխտի արինացն, առեալ զարինն ի խառնելիսն սրսկեաց զխորանան եւ զամենայն կահին, եւ զկէս արեանն եհեղ ի վերայ ժողովրդեանն, եւ ասաց. «Այս արինն ուխտին, զոր խաւսեցաւ ընդ ձեզ Տէր ի լերինն» (Ելք ԻԴ 8): Որոց յորժամ այնց ուխտից պարգետողն կամեցաւ նոր ուխտ տալ, եւ զարինն նոր շնորհեաց զիրն, եւ ոչ զանբանիցն ըստ հնոյն, զի այն անկատար եւ անզար էր: Որպէս յայտ առնէ Պաւլոս ի թելադրութենէ բանին Երեմիա, որ ասէ. «Ահա աւուրք գան, ասէ Տէր, եւ ուխտեցից տանդ Իսրաէլի եւ տանդ

<sup>1</sup> ԱԲ > ի

<sup>2</sup> ԱԲ մինչ

<sup>3</sup> ԱԲ զոր

<sup>4</sup> Դ Սինեա

Յուդա ուխտ նոր ոչ ըստ հնոյ ուխտին, զոր ուխտ/(38ա)տեցի ընդ հարս նոցա, յորում աւուր առի ի ձեռն հանել զնոսա յերկրէն եգիպտացոց, զի նոքա ոչ կացին յուխտին իմում, եւ ես անփոյթ արարի զնոցանէ, ասէ Տէր: Այլ այս է ուխտն, զոր ուխտեցից. Տաց զաւրէնս իմ ի միտս նոցա, եւ ի սիրտս նոցա գրեցից զնոսա» (Երեմ. ԼԱ 31-33) եւ «ոչ ի տախտակս քարեղէնս» (Բ Կորնթ. Բ 3): Միանգամայն ասելով նոր՝ հնացոյց

**Արձակեալ գկապեալ ծառայս քո յանջրդի գբոյ (Թ 11). Անջրդի գուբ** գկոնապաշտութիւն է ի(38բ)մանալ, որպէս ասէր Երեմիաս ի դիմաց Աստուծոյ եպերելով զԻսրաէլ. “Զիս թողին զաղբիւրս ջրոյ կենդանոյ, եւ փորեցին իւրեանց գուբս ծակոտկենս, որ ոչ կարացեն ունել ջուր» (Երեմ.Բ 13): Արդ, յայս դառն յանջրդի գբոյ, որում անկեալ գոլով պասքեալ էին ճշմարիտ աստուածգիտութեան, արձակեաց Քրիստոս Թագաւորն գկապեալ ազգ մարդկան, զոր ասացաւ առ նա Հայր իւր ի ձեռն Եսայեա, թէ՛ «Ետու գքեզ յուխտ ազգին եւ ի լոյս հեթանոսաց զառաջինն, եւ «Որ հնանա եւ ծերանա, մերձ է յապականութիւն» (Եբր. Ը 13):Արդ, ընդ այսոցիկ, զի Քրիստոսի արեամբ ուխտն սրտից եւ մտաց է, եւ նոր ունի եւ զայս եւս ազնուութիւնս, զի ոչ է այգեաց եւ ձիթենեաց անցաւորաց վայելից խոստումն, այլ իմանալի երկնաւոր բարեաց, զի «Ուխտեմ ձեզ ,ասէ, որպէս Հայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւն» (Ղուկ. ԻԲ 29): Այս ուխտի միջնորդ ետ զիւր արիւնն ի Վերնատանն, որ ասաց. «Առէք, այս է արիւն իմ նորոյ ուխտի» (Մտթ. ԻԶ 28, Մրկ. ԺԴ 24, Ղուկ. ԻԲ 20) ընդ ձեզ նշանակ: Արդ, ասէ մարգարէս առ այս թագաւորի, թէ ոչ արեամբ հին ուխտին, զոր լուծէր, այլ քո արեամբդ նոր ուխտ հաստատեալ:՝ բանալ զաչս կուրաց, արձակել գկապեալս ի բանտէ եւ ի տանէ կապանաց, ասել կապելոց, թէ՛ ելէք եւ որք ի խաւարին, թէ՛ յայտնեցարուք» (Ես. ԽԹ 9): Այս է գործք Քրիստոսի արեան ուխտին, զորոյ մեծութիւն ընդ հնոյն համեմատեալ տեսցուք, զի է նա արեամբ ցլուց եւ նոխազացն եւ մոխրով երնջուցն այնչափ պատուական էր, ուր զի Պաւղոս ասէ, թէ հարկ էր արիւնականացն, այս է՝ արդարոցն եւ մաքրագունիցն (հմմտ. Եբր. Թ 13)՝ զի՞նչ ասելի է զարեամբն Քրիստոսի նոր ուխտս, որ ոչ Իսրաէլ միայն, այլ զբոլոր մարդկութիւնս ի գբոյ մեղաց եւ ի՛ դժոխոց ազատեաց ի փրկողէն եւ յարձակողէն, դարձուցանէ զբանս մարգարէս<sup>2</sup> առ փրկեալսն եւ արձակեալսն //(39ա)՝ ասելով.

<sup>1</sup> Դ > ի

<sup>2</sup> Դ մարգարէն

**Նստջիք յամուր կապեալք ժողովրդեանդ, եւ փոխանակ միոյ աւուր պանդխտութեան քո կրկին հատուցից քեզ** (Թ 12). Բնաւորական<sup>1</sup> է ամենայն նեղելոցս յանդորրութիւն հասեալք ի կասկածանս կալ՝ մի՛ գուցէ դարձեալ ի նոյն վիշտս հասանիցէ<sup>2</sup> անկանել, վասն որոյ անհոգս առնէ զայսպիսիսս մարգարէս. **Նստջիք, ասէ յամուրս կապեալք ժողովրդեանդ**: Թէպէտ նստաւ յետ Իսրաէլ ի Պաղեստին ընդ յամուրս<sup>3</sup> տէրութեամբ Զաւրաբաբելի, այլ ոչ մշտնջենաւորապէս: Իսկ նորս Իսրաէլդ, արձակեալ ի գբոյ անաստուածութեան, նստաւ յամուրութեան եկեղեցոյ, որ հաստատեցաւ ի վիմէն ճշմարիտ ի վերայ առաքելական վիմի, վէճ անվանելի<sup>4</sup> ի դրանց դժոխոց, զոր Եսայի լեառն Տեառն ասէ ի գլուխս լերանց: Իսկ նստել հաւտացելոցն ի սմա, թէ՛ «Նստցին ի բարձր այրի վիմի հաստատնոյ»: Վասն որոյ խրատեալք ի Զաքարիա նստան յամուրս եկեղեցոյ հաւատացեալք: Բայց զի՞նչ, թէ՛

**Փոխանակ միոյ աւուր պանդխտութեան քո կրկին հատուցից քեզ** (Թ 12). Մտաւ այս երբեմն Իսրաէլի ազատութեամբն<sup>5</sup> յայնմանէ, որ ասացն, թէ՛ // (39բ) «Հաշտեալ եմ ընդ քեզ տառապեալսդ, խախտեալդ մինչեւ մխիթարեսցիս» (Ես. ԾԴ 11), այլ՝ ոչ միշտ, իսկ նորոյս<sup>6</sup> Իսրաէլի անսպառ եւ անվախճան՝ յետ դառնութեանցն բարութիւնքն կրկնակի, մանաւանդ բազմաւորակի, զի ոչ որպէս յանցանքն նոյնպէս եւ<sup>7</sup> շնորհքն: Դարձեալ **աւր պանդխտութեան** հաւատացելոց զկենցաղս կոչէ, յոր ճգնեալքն եւ պանդխտեալքն վասն Քրիստոսի, կրկին առցեն զհատուցումն աստ<sup>8</sup> եւ ի<sup>9</sup> հանդերձեալն. աստ տունս եւ եղբարս եւ որդիս, քոյր եւ մայր եւ ագարակ հալածանաւք հանդերձ, եւ աշխարհին, որ գալոցն է, զկեանսն յաւիտենականս ժառանգեսցեն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր աւրինեալ յաւիտեանս<sup>10</sup>:

<sup>1</sup> ԱԲ բնական

<sup>2</sup> Դ հասցէ

<sup>3</sup> Դ ամուրս

<sup>4</sup> Դ անվանել

<sup>5</sup> ԱԲ ազատութիւն

<sup>6</sup> ԱԲ նորոյ

<sup>7</sup> ԱԲ > եւ

<sup>8</sup> ԱԲ աստի

<sup>9</sup> ԱԲ > ի

<sup>10</sup> Բ > Եւ զի մի՛ ասիցեն, թէ իշով եկեալ թագաւորն՝ զի՞նչ կարիցէ վճարել, սկսանի զկնի խոնարհագունիցն զբարձրագոյնսն ճառել... յաւիտեանս

Եւ այս է, զոր ասէ Զաքարիայ, եթէ՛ Ուրախ լեր յոյժ դուստր Սիոնի, քարոզեա , դուստր Երուսաղէմի, ահա թագաւոր քո գայ առ քեզ՝ արդար եւ փրկիչ, եւ նոյն հեզ, եւ հեծեալ ի վերայ իշոյ եւ յաւանակի նորոյ: Ոչ անտեղի է եւ զայս քննել՝ զի՞նչ են պատճառք, զի բազում անգամ ել Յիսուս յԵրուսաղէմ, այլ ոչ այսպիսի փառաւք եւ սպասուք, քանզի դեռ սկիզբն էր տնտեսութեան. եւ՝ չէր ումեք ինչ յայտնի հրաշագործութիւնք նորա, եւ ոչ ժամանակ չարչարանացն մերձ. վասն այնորիկ խառն ի խուռն խառնէր ի նոսա, նաեւ կամաւ իսկ ծածկէր զանձն, զի թէ այսպէս զարմանալի երեւեալ էր ի սկզբանն, եւս առաւել ի բարկութիւն դրդէր զնոսա, իսկ յորժամ զգաւրութեան զբազում հանդէս եցոյց, եւ խաչ եւս եկեալ հասեալ էր ի դուրս, ապա այնուհետեւ առաւել ցուցանէր պայծառութիւն, եւ կարի իսկ յայտնագոյն զամենայն ինչ առնէր, որովք առաւել այրէին եւ կսկծէին դպիրքն եւ փարիսեցիքն: Եւ կարողութիւն էր նմա յառաջնումն իսկ գործել, այլ չէր ինչ աւգուտ: Եւ զայս առնէր ոչ զի ի ցոյցս ինչ գործիցէ, եւ մեծարանս անծինն դնիցէ: Այլ նախ եւ առաջին, զի մարգարէութիւն կատարեսցէ եւ արինակաւն զառնապա լինելոցն ծանուցէ: Երկրորդ՝ զի խոնարհութիւն ուսուցանէ մարդկան եւ կանոնս եւ սահմանս հաստատեսցէ: Երրորդ՝ զի զտրտմութիւն աշակերտացն փարատեսցէ, որք տրտմեալք էին վասն մահուան<sup>3</sup> նորա: Չորրորդ՝ զի յայտ արասցէ , թէ կամաւ գայ ի չարչարանս:

Արդ, եկեսցուք յառաջին գլուխն, եւ ասասցուք, թէ զհարդ զմարգարէութիւն կամ որպէս արինակաւն զառնապա լինելոցն ծանոյց, կատարեաց զմարգարէութիւնն , զի նստաւ ի վերայ իշոյ եւ յաւանակի, ըստ Զաքարիայ, որ ասէ<sup>4</sup>. **Ուրախ լեր յոյժ, դուստր:** Եւ բարեբանեցաւ ի ծերոց եւ ի տղայոց, ըստ Դաւթայ. «Արինեալ, որ գասդ յանուն Տեառն, եւ արինեցաք զքեզ ի տանէ Տեառն» (Սղմ. ՃԺԷ 26), եւ թէ՛ «Ի բերանոյ<sup>5</sup> մանկանց տղայոց ստնդեայ կատարեաց զարինութիւն» (Սղմ. Ը 3): Եւ ի վերայ անսուրբ կենդանեացն նստելովն կերպարանաւքն զանմաքոր հրէիցն եւ զպղծոց<sup>6</sup> հեթանոսացն՝ զկոչումն յառաջագոյն նկատէր, թէ ի նոսա հանգ-

<sup>1</sup> Ա նա ] եւ

<sup>2</sup> Ա հաստատէ

<sup>3</sup> Ա մահու

<sup>4</sup> Ա > որ ասէ

<sup>5</sup> Բ բերանոց

<sup>6</sup> Ա պղծոց

չելոց իցե<sup>1</sup>, եւ գլաւանակն ընդ իշոյն վասն այնորիկ ածել հրամայէր, զի նոր յաւանակաւն զեկեղեցի գուշակէր<sup>2</sup>, զի որպէս յաւանակն նոր էր եւ ի պիղծ անասնոց, նոյնպէս եւ ժողովուրդն նոր էր եւ պիղծ ի պղծոց, եւ յետ հանգչելոյ Տեառն ի վերայ նորա եղեւ սուրբ: Եւ տես բոլորովիմբ իսկ ի դէպ զաւրինակն աշակերտք լուծին զէշն եւ զաւանակն, եւ քանզի առաքելովքն իսկ հրէայք եւ հեթանոսք կոչեցան, քանզի հեթանոսաց ընտրութիւն էարկ նախանձ նոցա, վասն այնորիկ եւ էշն զհետ եկ յաւանակին, զի յետ հանգչելոյն Քրիստոսի ի վերայ հեթանոսաց, ապա եկեցցեն եւ նորա նախանձաբեկք: Եւ զայս Պաւղոս իսկ յայտ արարեալ ասէ. “Կորութիւն փոքր ի շատէ եղեւ Իսրայէլի մինչեւ լրումն հեթանոսաց մտցէ, եւ ապա ամենայն Իսրայէլ կեցցէ» (Հռոմ. ԺԱ 25): Բայց դու հայեաց եւ ընդ զգաւնութիւն<sup>3</sup> յաւանակին, զի տրմուղ եւ անվարժ եւ խամ ի սանձուց, ոչ ըմբոստանայր եւ ոչ անգուշէր, այլ մեղմ եւ հանդարտագոյն գնայր, որ եւ այն իսկ ապացոյց էր հանդերձելոյ իրաց, թէ զհարդ հանդարտելոց իցեն հեթանոսք, եւ յանկարծակի յարդարելոց, քանզի այնուհետեւ ստահակքն նուաճէին եւ պիղծքն սրբէին: Այսոքիկ առաջին գլուխն, թէ զհարդ զմարգարէութիւն կատարեաց կամ որպէս արինական զառոյսայ եղելոցն ծանոյց:

Եկեցուք ըստ խոստմանն մերում յերկրորդ գլուխն, եւ ուսցուք, թէ զհարդ խոնարհութիւն ուսուցանէ մարդկան, եւ կանոնս հաստատէ նստելովն ի վերայ իշոյն: Արդ, վարս ցածութեան այնպիսի<sup>4</sup> իրաւք մեզ ուսուցանէ եւ կանոնս եւ սահմանս հաստատէ, զի կարեւոր պիտոյիքն վարիցիմք՝ առ ի ուղղել հանապազ ամենայն իրաւք զկեանս մեր: Վասն այնորիկ իսկ եւ յորժամ ի ծնունդ եկն ոչ ապարանս բարձրաբերձս եւ գեղեցիկս<sup>5</sup> ընտրեաց, եւ ոչ մայր մեծատուն, փարթամ եւ երեւելի, այլ՝ յաղքատ, եւ ի դոյզն մի յաղջկանէ խաւսեցեալ առն հիւսան, եւ ի խղի միոջ ծնանէր, եւ ի մսուր դնիր, եւ աշակերտս ընտրէր ոչ ճարտարախաւսս, իմաստունս եւ բանիբունս եւ ոչ զմեծատունս եւ զհզաւրս, այլ՝ զաղքատս եւ զտգէտս եւ զտկարս: Եւ զսեղանն մե՛րթ ի գարեղէն նկանակէ<sup>6</sup> կազմէր,

<sup>1</sup> Բ իցէր

<sup>2</sup> Ա գուշակէ

<sup>3</sup> Բ սգաւնութիւն

<sup>4</sup> Բ այսպիսի

<sup>5</sup> Ա գեղեցիկ

<sup>6</sup> Բ նշանակէ



Եւ մե՛րթ առժամայն ինչ իրաւք բաւականանայր<sup>1</sup>, եւ հանդերձս գծուծս ագանէր՝ ոչ ինչ ընդհատ ի բազմաց, եւ տուն բնաւ իսկ չունէր: Եւ յորժամ տեղեաց ի տեղի հասանէր ուրեք երթալ, հետիոտն<sup>2</sup> երթայր եւ առանց իրիք կազմածոյ, եւ յորժամ վաստակէր, ուր եւ հասանէր, նստէր. ոչ աթոռոյ ինչ պետք էին եւ ոչ բարձի, այլ խառն<sup>3</sup> ի գետնի: Եւ դարձեալ, զի տրտմութեան եւ սգոյ չափ ուսուցանիցէ մարդկան, արտասուեաց սակաւ մի ի վերայ Ղազարու, եւ ամենայն ուրեք, որպէս ասացի յառաջագոյն, կանոնս հաստատէր, թէ մինչեւ ցոր վայր պարտ է երթալ, եւ ըստ այն յառաջ չանցանել, քանզի եւ այժմ բազմաց վասն տկարութեան մարմնոյ կամ ծերութեան հասակի գրաստու պէտք լինին, եւ այնմ եւս չափ եցոյց, թէ չէ պարտ ձիս զարդարել կամ ջորիս պճնել եւ յարանալ, այլ յիշի նստել եւ ըստ այսմ աւելի ինչ փառս մի՛ խնդրել եւ ամենայն ուրեք զչափ պիտոյիցն չելանել:

Եւ այսոքիկ, թէ զհարդ զխոնարհութիւն ուսոյց եւ կամ կանոնս հաստատեաց, քննեսցուք եւ զերրորդն գլուխ, թէ զհարդ զտրտմութիւն աշակերտացն փարատեաց: Արդ, յորժամ շքեղաշուք փառաւք եւ գերապանծ պատուով եմուտ յԵրուսաղէմ գովեալ յամենեցուն եւ «որդի Դաւթի» արինաբանեալ ի ծերոց եւ ի տղայոց ցնծացեալ բերկրեցան աշակերտքն, վասն զի փառք եւ գովութիւն վարդապետին կարի յոյժ ուրախութիւն է՝ աշակերտացն, որպէս եւ անփառութիւն՝ տրտմութիւն: Եւ դարձեալ, թէ պէտ բազում նշանս եւ սքանչելիս տեսեալ էին ի նմանէ, դեռ եւս երկբայս էին եւ ի կարծիս. թէրեւս այլ ըստ այլոյ իմն լինիլ իրացն վարկանէին, որպէս ասէ Յովհաննէս, թէ եղբարքն եւս չէին հաւատացեալ ի նա, իսկ յորժամ տեսին յայնպիսի բարձրութիւն փառաց յամենեցունց բարեբանեալ հաստատեցան ի միտս իւրեանց, թէ ճշմարտութեան զհետ չոգան, վասն որոյ ուրախացան յոյժ: Եւ դարձեալ<sup>4</sup> յարինակէն որպէս ասացի ի լուծանելոյն զյաւանակն ծանեան , թէ զհեթանոսս դիւրաւ կոչելոց են յաստուածգիտութիւն, ուրախացան, վասն որոյ տրտմեալք էին յերկիւղէ նոցա. զի զոր արինակ անդ չդարձան ընդդէմ եւ արգելին , սոյնպէս զհեթա-

<sup>1</sup> Ա բաւականանալ

<sup>2</sup> Ա յետի

<sup>3</sup> Ա ի խառն

<sup>4</sup> Բ > է

<sup>5</sup> Բ բառս ի լուս.

նոսս չկարէ որ արգելով յայնցանէ, որ յառաջագոյն ունէին զնոսս դէքն: Այս թէ զհարդ զտրտմութիւն աշակերտացն փարատեաց:

Տեսցուք եւ զչորրորդն գլուխ, թէ զհարդ ցուցանէ զինքն կամաւորութեամբ եկեալ ի չարչարանս: Արդ, որպէս առ թգենեան եւ առ անծանաթ առն արար, նոյնպէս եւ աստ առ թգենեան, զի մի՛ կարծեսցեն, թէ վասն զի ոչ գոյր ի նմա զաւրութիւն, ըմբռնեցաւ կանխեաց եցոյց ի ձեռն անշունչ տնկոյն, զոր ցամաքեցոյց, թէ կարող է նա եւ զխաչահանունսն բանի սատակել, այլ կամաւ գայ ի չարչարանս, նոյնպէս եւ առ անծանաթ այրն յղելով զաշակերտսն, զի այնու եւս յայտ արասցէ, թէ կարող է չարչարիլ, զի որ զմիտս առն հաւանեցոյց լինել նմա ասպնջական, եւ զայն բանի միայն՝ զի՛նչ ոչ գործէր ընդ խաչահանունցն, թէ չէր կամեցեալ չարչարիլ: Զնոյն եւ աստ արար. զնոսս որ երբէք ոչ ճանաչէինն զնա, հաւանեցուցանէր տալ յանխնայ զհրեանց անասունսն եւ ոչ ինչ դիմադարձ՝ լինել: Եւ այն զի զաշակերտսն եւս յղեաց, փոքր ինչ համարիցիս զիրսն, որ եղեն, ո՛ր հաւանեցոյց զնոսս, զի զհրեանց անասունսն առնուցուն ի նոցանէ: Եւ թերեւս աղքատք եւ չքաւորք էին, եւ չասացին ինչ: Եւ զի՛նչ ասեմ, թէ չասացին ինչ, թերեւս հարցին իսկ ոչ, կամ թէ հարցին, եւ չիշխեցին ընդդիմանալ, այլ լուռ կացին եւ թոյլ ետուն: Եւ երկոքին իսկ սքանչելիք էին, եւ կամ թէ չասացին ինչ, յորժամ լուծին, առին եւ զնացին, եւ կամ թէ ասացին ինչ իբրեւ լուան, թէ՛ «Տեառն իրեանց պիտոյ է», լուռ կացին եւ ոչ դարձան ընդդէմ: Եւ այն, զի զնա ոչ տեսին, այլ՝ զաշակերտսն. այնու խրատէր զնոսս, թէ հրէայսն կարող էր ակամայ արգելով եւ պապանծեցուցանել, զի մի՛ կարասցեն մտաբերել ի նա վասն չարչարանաց եւ մահու, այլ ոչ կամեցաւ: Եւ այսու ամենայնիւ յայտ առնէ՛, թէ կամաւորութեամբ գայ ի չարչարանս: Բայց զարմանալ արժան է ընդ մարգարէիցն մանաւանդ, թէ ընդ Հոգւոյն , որ ի նոսս խաւսէր, թէ զհարդ զամենայն ինչ յառաջագոյն ասացին ստուգութեամբ. զկէսն Դաւիթ եւ զկէսն Զաքարիայ. Դաւիթ, թէ՛ «Ի բերանոց մանկանց տղայոց ստնդիայց» (Սղմ. Ը 3), եւ թէ՛ «Աւրհնեալ, որ գասդ յանուամբ Տեառն եւ արհնեալ» (Սղմ. ՃԺԷ 26), եւ թէ՛ «Տէր Աստուած մեր երեւեցաւ մեզ, արարաք» (Սղմ. ՃԺԷ 27), եւ Զաքարիաս. **Ուրախ լեր յոյժ դուստր Սիոնի, քարոզե-**

<sup>1</sup> Բ ընդդիմադարձ

<sup>2</sup> Ա առնէր

**ա դուստր Երուսաղէմի** ... եւ նոյն ի վերայ իշոյ եւ յաւանակի նորայ: Արդ, այսոքիկ բաւականասցին առ ի տեսութիւն բանիս, զի որք կամեսցին զմիտս աստուածային բանիցս բացայայտել՝ զմարգարէիս զգեցցին զանաքինութիւն, զի եւ նորին Հոգւոյ արժանաւորեսցին, իսկ մեք ըստ մերում տկարութեանս փոքր ինչ պատճառ տուաք բանիս՝ վստահանալով առաջի կատարելոցդ, այլ զկատարեալն տեսութիւն Հոգին շնորհաց բացցէ առաջի լուսափայլ մտաց ձերոց<sup>2</sup> :

***Բանալի բառեր.** Ճատեր, մատենագիր, ժառանգություն, դպրոց, այլաբանական բացատրություն, «նկարագիր», «իմացումն», համանվանական, բազմիմաստ կիրառություններ, հասկացություններ*

## ОДНА СТРАНИЦА ИЗ БОГОСЛОВСКОГО НАСЛЕДИЯ ТИРАТУРА ВАРДАПЕТА КИЛИКЕЦИ

*Акоб Кёсеян*

***Ключевые слова:** гомилии, писатель, наследие, школа, аллегорическое толкование, “описание”, “знание”, омонимичность, многозначное использование, понятия.*

Тиратур Киликеци – книжник XIV века. В Гладзоре он был учеником выдающегося церковного деятеля, педагога, книжника Есаи Нчеци. В 1309, 1321 гг. в копиях рукописей упоминается в качестве писателя и получателя, а в 1337 г. наряду с Есаи Нчеци как “верховный учитель”. После кончины Нчеци в 1338 г. в Гермоне создает монастырскую школу, где и преподает долгие годы. Помимо педагогической, Тиратур занимался литературной деятельностью. Оставил гомилии с глубоким богословским содержанием. Настоящая публикация посвящена одной из его гомилий с эпиграфом “Радуйся сильно, дочь Сиона, Проповедуй, дочь Иерусалима...” (Зах. 9, 9). В работе представляется критический текст гомилии, а в исследовании рассматривается его богословское содержание.

<sup>1</sup> Ա > եւ նոյն ի վերայ... նորա

<sup>2</sup> ԳԴ > Եւ այս է զոր ասէ Ջաքարիա եթէ՝ «Ուրախ լեր յոյժ դուստր ...լուսափայլ մտաց ձերոց»:

**ONE PAGE FROM THE THEOLOGICAL HERITAGE OF TIRATUR  
VARDAPET KILIKETSI**

*Hakob Kyoseyan*

**Keywords:** *homilies, writer, heritage, school, allegoric exegesis, „description”, „knowledge”, homonymy, polysemantic use, concept.*

Tiratur Kiliketsi is the 14th century writer. He was the student of outstanding Church writer, scholar, and teacher Esayi Nchetsi in Gladzor. He was mentioned as a writer and recipient in copied manuscripts of 1309 and 1321, but in 1337 with Esayi Nchetsi as a «Great Teacher». After the dead of Nchetsi, Tiratur Kiliketsi established the monastery school in 1338 in Hermon, where he taught for many years. In addition to teaching, he was also a writer. He wrote deep theological homilies. This study is devoted to one of his homilies with epigraph «Be glad, daughter of Sion, preach daughter of Jerusalem...» («Ուրախ լեր յոյժ դուստր Սիոնի, քարոզեա դուստր Երուսաղէմի...») (Zack. 9; 9-12). This work presents a critical text of homily and the study of its theological content.

-----

**Հակոբ Բյոսեան** - փիլ. գիտ. դոկտոր, ԵՊՀ Աստվածաբանության ամբիոնի վարիչ, Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող

**Акоп Кйосеян** - доктор философских наук, заведующий кафедрой Богословия факультета Богословия ЕГУ, старший сотрудник Матенадарана- института древних рукописей имени Месропа Маштоца

**Hakob Qoseyan** - Sc. D. in Philosophy, Head of chair of Theology at the YSU Faculty of Theology, Senior resaercher of Matenadaran - Institute of Ancient Manuscripts after Mesrop Mashtots